ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍԱՐԱՏՈՎԿԱՅԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

---

№ 12-10/ՍԳ
«26» Դեկտեմբերի 2016թ.

ՀՀ Լոռու մարզպետ պր – ն
Ա. Նալբանդյանին

Կից ներկայացնում եմ Սարատովկա համայնքի ավագանու թիվ 34,35,37 որոշումները :

Առդիր՝ 4թերթ:

Համայնքի ղեկավար՝ Գ. Մարդոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ.Սարատովկա,
Հեռախոս՝ 099045550
Էլ.Փոստ՝ saratovka.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«20» դեկտեմբերի 2016 թվականի N 34 –Ա

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարատովկա համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 27-Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարատովկա համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Նորիկ | Վելիցյան | | | |
| Գիվի | Քարտաշյան | | | |
| Արտակ | Պողոսյան | | | |
| Նարինե | Ավետիսյան | | | |
| Անի | Սարգսյան | | | |

Համայնքի ղեկավար՝ _______________ /Գ. Մարդոյան /

2016թ. դեկտեմբերի 20
Գ. Սարատովկա

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Սարատովկա համայնքի ավագանու
2016 թվականի դեկտեմբերի 22-ի N 34-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Դավոյան Անահիտ Ռոմիկի - 10000 դրամ,

2) Չոբանյան Գնել Գագիկի - 10000 դրամ,

3) Չոբանյան Սուզանա Արսենի - 10000 դրամ,

4) Մխիթարյան Արմինե Գրիգորի - 10000 դրամ ,

5) Պապիկյան Աննա Սերոբի - 10000 դրամ :

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 50000 դրամ:

ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ.ՄԱՐԴՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ.Սարատովկա,
Հեռախոս` 099045550
Էլ.Փոստ` saratovka.lori@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

*« 20 » դեկտեմբերի 2016 թվականի N 35 –Ա*

## ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 219-րդ հոդվածի 2-րդ կետով Սարատովկա համայնքի ավագանին`*

*ՈՐՈՇՈՒՄ Է.*

1. *Սարատովկա համայնքի ղեկավար Գառնիկ Մարդոյանին պարգևատրել 150000 դրամով:*
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:*

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| *Նորիկ Վելիցյան* | | | |
| *Գիվի Քարտաշյան* | | | |
| *Արտակ Պողոսյան* | | | |
| *Նարինե Ավետիսյան* | | | |
| *Անի Սարգսյան* | | | |

*Համայնքի ղեկավար` ____________________ / Գ. Մարդոյան /*

*2016թ. դեկտեմբերի 20*
*Գ. Սարատովկա*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ.Սարատովկա,
Հեռախոս՝ 099045550
Էլ.Փոստ՝ saratovka.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբերի 2016 թվականի N 37–Ա

## ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի հանրապետության կառավարության 2011թվականի դեկտեմբերի 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին>>թիվ 1918-Ն Հաստատված կարգի 17 կետի պահանջների համաձայն, հիմք ընդունելով Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 97 դրական եզրակացությունը, համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է

1. ՀՀ Լոռու մարզի Սարատովկա համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նպատակային նշանակության 06-099-0217-0058 Կադաստրային ծածկագրով 0,027 հա արոտ փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողերի գործառնական նշանակության:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ ապահովել իրավունքների պետական գրանցումը Հայաստանի հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում և համայնքի հողային հաշվեկշռում կատարել փոփոխություն:

| *Համայնքի ավագանու անդամներ* | | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|---|
| *Նորիկ* | *Վելիցյան* | | | |
| *Գիվի* | *Քարտաշյան* | | | |
| *Արտակ* | *Պողոսյան* | | | |
| *Նարինե* | *Ավետիսյան* | | | |
| *Անի* | *Սարգսյան* | | | |

*Համայնքի ղեկավար՝ ___________ / Գ. Մարդոյան /*

*2016թ. դեկտեմբերի 20*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ**
**ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարատովկա համայնք, հասցե գ.Սարատովկա,
Հեռախոս՝ 099045550
Էլ.Փոստ՝ saratovka.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 20 » դեկտեմբերի 2016 թվականի N 36 –Ն

## ՍԱՐԱՏՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 Թ.Թ. ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1. Հաստատել Սարատովկա համայնքի 2017- 2021 թ.թ. սոցիալ տնտեսական զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը :

| Համայնքի ավագանու անդամներ | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Նորիկ | Վելիցյան | | | |
| Գիփի | Քարտաշյան | | | |
| Արտակ | Պողոսյան | | | |
| Նարինե | Ավետիսյան | | | |
| Անի | Սարգսյան | | | |

Համայնքի ղեկավար՝ ______________ / Գ. Մարդոյան /

2016թ. դեկտեմբերի 20
Գ. Սարատովկա